կագրական առանձնահատկություններով: Շրջանում կան հին բազիլիկներ, վաղ միջնադարյան գմբեթակերտ հորինվածքներ՝ փարթամ, մեծածավալ վանական մի հաստատություն և վերջապես լավ պահպանված բերդ ու միայն քանակական սակավությունն է, որ թույլ չի տալիս ըստ արժանվույն գնահատել շրջանի ճարտարապետական ժառանգությունը:

Վաղ միջնադարում Նոյեմբերյանի շրջանը կազմել է Գուգարք նահանգի հարավարևելյան սահմանային հատվածը: X-XII դդ. պատկանել է Կյուրիկյաններին՝ լինելով Տաշիր-Ձորագետի թագավորության կազմում: Շրջանի որոշ հատվածներ մտել են Վահրամյանների տիրույթների մեջ:

Առանձին գավառներ (Կանգարք, Կողբափոր) XII-XIII դարերում պատկանել են Զաքարյաններին: Դատելով Բերդավանի հզոր ամրոցից, գավառն ունեցել է ռազմավարական կարևոր նշանակություն: Սակայն Մշկավանքի և Կոթիի Ս. Սարգիս նշանավոր վանական հաստատությունների առկայությունը վկայում է շրջանում մշակութային ու կրթական մեծաբովանդակ օջախների գործունեության մասին:

## ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ

Քաղաքում հին և նշանավոր հուշարձաններ չկան: Միակ՝ բազիլիկ եկեղեցին վերանորոգված է XIX դարում: Քաղաքի գործող գերեզմանոցում կան մի քանի սովետական խաչքարեր, որոնցից երկուսն ունեն հիշատակագրություն.

***1057. ԽԱՉՔԱՐ.*** գերեզմանոցում, ցածր պատվանդանով, վրան 7 խաչապատկերներ, 1 տող.




ԹՎ[ԻՆ] ՋԴ (1455) Մ...ԻԵ...:

***Ծանոթ.*** Ննջեցյալի անունը կիսաեղծ է, չի կարդացվում:

***1058. ԽԱՉՔԱՐ.*** գերեզմանոցում, 2 տող.

ԹՎ[ԻՆ] ՌԴԲ (1643):
ՍԲ ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱՒՍ ԹԱՄԱՄԻՆ:

## ՄՇԿԱՎԱՆՔ (ՄՇԱԿԱՎԱՆՔ)

Գտնվում է Կողբ գյուղից 3 կմ հարավ-արևմուտք, շրջկենտրոնից ոչ հեռու: Վանական շենքերի խումբը բաղկացած է Ս. Աստվածածին անունը կրող եկեղեցուց և գավթից: Եկեղեցին թաղածածկ միանավ սրահ է՝ մեկ զույգ բավականին շքեղ կիսակլոր որմնամույթերով: Բեմական խորանի երկու կողմերում կառուցված են երկհարկանի ավանդատներ: Որմնամույթերը իրենց պրոֆիլավորվածությամբ մտածել են տալիս, որ այն սկզբնապես եղել է գմբեթասրահ և թաղածածկի է վերափոխվել 1139 թ. երկրաշարժից

ավերվելուց հետո: Ճարտարապետությամբ առավել ուշագրավ է գավիթը: Այն պատկանում է երկսյունանվորների տիպին (Արատես, Հայրավանք, Շխմուրադ, Հաղբատ), կենտրոնը պսակված է խաչաձևող կամարներով, որի կառուցվածքային առանձնահատկության մեջ ուսումնասիրողները նմանություն են տեսնում Գանձասարի և Հաղբատի մեծ գավթի հետ:[102] Արևելյան կողմում գավիթն ունի երկու կից սենյակներ, որոնցով եկեղեցու արևմտյան հատվածը ներառում է իր մեջ:

Բավականին շքեղ զարդարվել է գավթի մուտքը: Այն շարված է խաչաձև զարդաքանդակներով, որոնք լայն ճակատով շրջանակում են մուտքի բացվածքը:

Մշկավանքի արձանագրությունների համաձայն, եկեղեցու կառուցմանը մասնակցել են մի շարք անձինք՝ վճարելով նրա առանձնամասերի արժեքը: Գավիթը շինարարական արձանագրություն չունի, սակայն նկատի առնելով, որ արևելյան կողմի որմնասյուները կցված են եկեղեցու արևմտյան պատին, պարզ է, որ այն կառուցվել է եկեղեցուց հետո: Ներքուստ արևելյան պատին փորագրված՝ 1242 թվականի արձանագրությունը հնագույնն է և կարող է դիտվել իբրև վկայություն գավթի կառուցումը դրանից ավելի վաղ թվագրելու համար: Վարդան Վարդապետի հաղորդման համաձայն՝ 1219 թ. «Եղեւ շարժ ահագին և փլաւ պաճուճազարդ եկեղեցին, որ ի Մշակավանս»:[103] Հունվարյան այս երկրաշարժից ավերվել է եկեղեցին և չորս պատարագիչներ նահատակվել են փլատակների տակ: Պատմիչի վկայությունից կարելի է եզրակացնել, որ Մշկավանքի *պաճուճազարդ* եկեղեցին կառուցվել է առնվազն XII դարի վերջերում, Նոր Վարաջավանքի Անապատի ժամանակներում (1198 թ.): Չի բացառվում, որ աղոթարանի վերականգնման ընթացքում կամ դրանից ոչ շատ ուշ, կառուցվել է նաև գավիթը:

***1059. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ.*** հարավային պատի արևելյան մասում, ավանդատան դիմաց, 7 տող.

| | |
|---|---|
| ԿԱՄԱՆ ԱՅԵԱՍԼԱՆՈՐԴԻՍԹ | ԿԱՄԱՒՆ ԱՅ ԵՍ՝ ԱՍԼԱՆ, ՈՐԴԻ ՍԹ- |
| ԵՇԻՆԵՑԻՁՄԱՏՈՒՌՍԻՀԱԼԱԼԻՆՉ | Ե, ՇԻՆԵՑԻ ՁՄԱՏՈՒՌՍ Ի ՀԱԼԱԼ ԻՆՉ- |
| ԻՑԻՄԵՒԱՌԱՋՆՈՐԴ ԻՏԻՍ | ԻՑ ԻՄ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴ[Ա]Ց ՄԲ ՈՒ [Խ]ՏԻՍ |
| ՀԱՍՏԵՑԻՆԻՏԱՐԻՆ | ՀԱՍՏ[ԱՏ]ԵՑԻՆ Ի ՏԱՐԻՆ............... |
| ԱՆ | ԱՒՆ.................................................. |
| ՀՐ | ՀՐ.................................................... |
| ԵՒ | ԵՒ.................................................... |

*Հրատ.* «Էջմիածին», 1959, Գ, 57, Ավագյան, ՎՊ, 195:

***Ծանոթ.*** Արձանագրության վերջին երեքուկես տողը հողմահարված-թափված է: Ամսում ասվածը ավանդատունն է: Ս. Ավագյանը կարդացել է առաջին 6 բառերը, *Ասլան* անունը՝ *Սաղուն:* Իսկ Լ. Բարսեղյանը բաց է թողել անունը:

[102] **Ս.Х. Мнацаканян**, Архитектура армянских притворов, 80, 118.
[103] Վարդան Արևելցի, էջ 144:

***1060. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ.*** արևելյան պատին, հյուսիսային ավանդատան և բեմի արանքում, 6 տող.



ԱՂԱՉԵՄ, ՈՎ
ՍԲ ՊԱՏԱՐ
ԱԳՈՂ[Ք] ՔԻ, ՅԻՇԵԼ Զ-
ԱԻԷՏԻՍ ԵՒ ԶՎԱՐ-
ԴԱՆ, ՇԻՆՈՂՔ ՍԲ
ԽՈՐԱՆԻՍ: [ԱՄԷՆ]:

***Ծանոթ.*** Խոսքը վերաբերում է խորան կառուցելուն, որի տակ կարելի է հասկանալ բեմական հատվածը: Անշուշտ, ոչ թե կառուցող-վարպետներն են, այլ ծախսը հոգացողները, քանի որ ճարտարապետները ոչ միայն խորանը, այլև ամբողջ շենքն են կառուցում (շինում): Աջ եզրի տառերը եղծված են, հազիվ նշմարվում են որոշ հետքեր:

***1061. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ.*** հյուսիսարևելյան ավանդատան հյուսիսային պատին կողքանց դրված փոքր խաչքարի վրա, ներքուստ, 2 տող.



. . [ԽԱ]ՉՍ ԱԻԳՆԵՑ
ԵԿԵՂԵՑՈՅՍ:

***Ծանոթ.*** Արձանագրության մի փոքր պատառիկ է մնացել, սակայն հասկացվում է, որ ումն ոք նպաստավորել է եկեղեցու կառուցումը:

Այսպիսով, այս երեք արձանագրությունները վկայում են վանքի՝ ճարտարապետական առումով առավել բարդ հատվածը՝ եկեղեցին, որ կառուցվել է հանգանակած նվիրատվությունների միջոցով:

***1062. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ.*** հյուսիսային պատին, ներքուստ, խորանի մուտքի դեմ, 9 տող.



ԿԱՄԱՒՆ ԱՅ ՀԱՍՏ-
ԱՏԵՑԱՒ Ի ՏԱՐԻՆ :Գ: (3)
ԱՒՐ ԺԱՄ Ի ՏԱՒՆԻ ՍՐԲ-
ՈՅՆ ԳՐ[ԻԳՈ]ՐԻ :Ա: (1) ՏԻ-
ՐԿԱՆՆ, [:Ա: (1) ՀԵՐԻ]ՔՆԱԶ-
ԻՆ, :Ա: (1) [ԻՆՁ], ՈՐ ԱԻԳ-
ՆԵՑԻ[ՆՔ ՇԻՆ]ՈՒԱԾ Ե-
ԿԵՂԵՑՈՅՍ: ՈՐ ԽԱ-
ՓԱՆԵ ԴԱՏԻ ՅԱՅ:

***Ծանոթ.*** Տիրիկի (= Տիրկանն) և թերևս, մերձավորների 60-70 գ. ոսկու նվիրատվությունը հավանաբար արվել է եկեղեցու վերաշինության ընթացքում, XII դ. կեսերին:

*Հինգերորդ տողի վերջում, ՆԱԶ-ից առաջ ուրվագծվում է ԱՐ կցագիրը, ըստ այդմ, ՀԵՐԻՔՆԱԶ չի վերականգնվում (խմբ.):*

*1063. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ.* բեմի հյուսիսային պատի քանդակազարդ խորշի գլխին, որմնախորշի տակ, 3 տող.



ԶՀԱՅՐ ԳՐԻԳՈՐ ՅԱՂԱ-
ՒԹՍ ՅԻՇ-
ԵՑԷՔ:

*Ծանոթ.* Դատելով արձանագրության տեղադրությունից՝ Գրիգորը պետք է որ վանահայրը լինի եկեղեցու շինարարության (կամ վերաշինության) ժամանակ, ինչը նկատել է նաև Լ. Բարսեղյանը («Էջմիածին», 1959, Գ, էջ 56)՝ թեև այն չի հրատարակել: Այս իրողությունն ուղղակի վերահաստատում է հաջորդ վիմագիրը:

*1064. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ.* հյուսիսարևելյան ավանդատան մուտքի և բեմի արանքում, ներքուստ, 3 տող.



ԿԱՄԱՒՆ Ա̅Յ̅ ԵՍ՝ ՀԱՅՐ ԳՐԻԳՈՐ ԵՒ ԱՅԼ ՄԻ-
ԱԲԱՆ ԵՂԲԱՐՔՍ, ՀԱՍՏԱՏԵՑԱՔ Ի ՏԱՐԻՆ
:Բ: (2) ԺԱՄ ԽԱՉԲԷԿԻՆ՝ Ի ՏԱՒՆԻ Ս̅Բ̅ ԽԱՉԻՆ [Ջ]

*1065. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ.* ներքուստ, հյուսիսարևելյան ավանդատան մուտքի և բեմի արանքում, վերևի մասում, 8 տող.



ԵՍ՝ ԳՐԻԳՈՐ, [ՄԻԱԲ]ԱՆԵՑԱ
[Ս̅Բ̅]Ա[ՍՏՈՒԱ]ԾԱԾՆԻՍ ԵՒ ԵՏՈՒ
ԶԻՄ Ս̅Բ̅ ԳՐԻԳՈՐՆ Ա[ՍՏՈՒԱ]ԾԱԾ-
ՆԻՍ ԸՌՍՏԱԿԷՍ ԵՒ ԱՅԼ
ԵՂԲ[ԱՐՔՍ] ՀԱՍՏԱՏԵ-
ՑԻՆ [Տ]ԱՐԻՆ :Գ: (3) ԺԱՄ ԶՎԱ-
ՐԴԱՒԱՌԻՆ ՈՐ ԽԱՓԱՆ-
Է՝ ԴԱՏԻ ՅԱ̅Յ̅:

*Ծանոթ.* Ս. Գրիգորն այս դեպքում կամ մասունք է կամ ինչ-որ սրբություն:

**1066.** ***Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ.*** բեմի հարավային կոր պատին, 9 տող.



ԿԱՄԱՒՆ ԱՅ ԵՄ՝ ԳԱՂԱ-
ՅՍ, ՄԻԱԲԱՆԵՑԱՅ ՍԲ
Ա[ՍՏՈՒ]ԾԱԾՆԻՍ, ԱՌԱՋՆՈՐԴ ՍՈՐ-
ԱՅ ԽՈՍՏԱՑԱՆ :Ե: (5) ԺԱ
Մ Ի ՏԱՒՆԻ ՅՈՎԱՆՈՒ :Ա: (1)
ԳԱՂԱՅԻՆ, :Ա: (1) ՄԵՆԻ[Ն]:Ա: (1) [Ա]
ԲՆԱՅԻՆ :Ա: ՍԱՐԳ[Ս]Ի[Ն] :Ա:
ԱՊԸՍՏԱՄԲԻՆ: ՈՐ Խ
ԱՓԱՆԷ ԴԱՏԻ ՏՆ Է:

***Ծանոթ.*** Երկմտելի է երկու անգամ հստակ գրված ԳԱՂԱՅՍ (թե՞ գաչայս) անունը: ՏԱՒՆԻ բառում Ա-ն գլխիկոնծ է:

*Կարծում ենք, որ ոչ թե Ա-ն է գլխիկոնծ, այլ բարբառի ազդեցությամբ գրվել է Ի ՏՈՒՆԻ, ինչպես թիվ 1079, 1080 վիմագրերում ծանոթագրել է Ս. Սաղումյանը (խմբ.):*

**1067.** ***Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ.*** հարավարևելյան ավանդատան և բեմի արանքում, 7 տող.



ԿԱՄԱՒՆ ԱՅ ԵՄ՝ ՍԻՐԱՅԴԵՂ-
Ս, ԵԿԻ ԴՈՒՌՆ ՍԲ Ա[ՍՏՈՒԱ]ԾԱԾՆԻՍ,
ՄԻԱՅԲԱՆ ԵՂԲԱՐՔՍ ՀԱՍ-
ՏԱՏԵՑԻՆ Ի ՏԱՐԻՆ :Բ: (2) ԱՒՐ ԺԱՄ
ԲՈՒՆ ԲԱՐԱՅԿԵՆԴԱՆԻՆ ՍԱՐՔԱ-
ՈՆԻՆ ԵՒ ԻՒՐ ԿԵՆԱՅԿՑԻՆ ՈՒ ՍԻՐԱԴԵՂԻՆ: ՈՐ ԽԱՓԱՆ
Է ՄԵՂԱ ԱՌՑԷ:

*Հրատ.* «Էջմիածին», 1959,Գ, 57:

***Ծանոթ.*** Այս և այլ վիմագրերում առաջնորդի փոխարեն հանդես են գալիս ուղղակի *միաբան եղբարք*՝ վանքի միաբանության անդամները: Լ. Բարսեղյանը պատարագների թիվը կարդացել է՝ :Գ: ԱՒՐ:

***1068. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ.*** հարավարևելյան ավանդատան և բեմի արանքում. նախորդից ներքև, 9 տող.



ԿԱՄԱՒՆ Ա̅Յ̅ ԵՍ՝ ԳՐԻԳՈՐ, ԵՒ
ՎԱՀՐԱՄ, ՏՎԱՔ ՋԱՐՏ Ա[ՍՏՈՒԱ]-
ԾԱԾԻՆՍ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴ-
Ք ՍՈՐԱ ԽՈՍՏԱՑԱՆ Ի
ՏԱՐԻՆ :Ե: (5) ԺԱՄ ՋՀՈԳՈՅՆ Գ-
ԱԼՈՒՍՏՆ :Բ: (2) ԳՐԻԳՈՐՈ, :Բ: (2)
ՎԱՀՐԱՄԱ, :Ա: (1) ԱՐՁՈ[Ւ]Ի [Խ]ԱԹ-
ՈՒՆԻՆ: ՈՐ ԽԱՓԱՆԷ՝ ՄԵՐ ՄԵՂ-
ԱՑՆ ՏԷՐ Է:

***Ծանոթ.*** Շատ հավանական է, որ Գրիգորը Իվանե Զաքարյանի տան հեջուբն է (կառավարիչը), բարձր իրավասություններով օժտված քաղաքական մի գործիչ XIII դ. առաջին կեսում: Վահրամը Գագեցի կոչվող իշխան զորավարն է, թուրք-սելջուկներից երկրի ազատագրման ականավոր գործիչներից մեկը, որի տիրույթների մեջ էր մտնում նաև Կողբափոր գավառը XIII դ. սկզբներից: Արզուխաթունը (Արզու խաթուն) թերևս Հաթերքի իշխանաց իշխան Վախտանգի կինն է, Կայենի և Մահկանաբերդի տեր, Տփխիսի ամիրա Քուրդ Արծրունու դուստրը, առատաձեռն նվիրատվություններով հայտնի իշխանուհիներից մեկը: Նրանց 5 պատարագաժամ արժեցող դրամով (100-125 գ. ոսկի) ծեռք բերված արտն է տրվել Մշկավանքի Ս. Աստվածածին եկեղեցուն: Արտը պետք է հասկանալ վարելահող, մշակովի հող առհասարակ:

*Ցավոք, Ս. Սաղումյանը չի նշել, թե նշված Արզուխաթունը ում դերում կամ ինչ կարգավիճակում է հայտնվել այս վիմագրում (խմբ.):*

***1069. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ.*** ներքուստ, հարավային պատի արևելյան մասում, 5 տող.



ԿԱՄԱՒՆ Ա̅Յ̅ ՀԱՍՏԱՏԵՑ-
ԱՒ Ի ՏԱՐԻՆ :Ե: (5) ԺԱՄ ԵՐԿՐՈ[ՐԴ]
ԳԱԼԸՍՏԵ[Ա]Ն՝ ՇՐՈՒԱՆԱ, ԲԱՀՐԻ, ՍԱՐԳՍԻ, ՀԵՍԱՐԻ
[ԵՒ] ԳՐԻԳՈՐՈՅ: ԿԱՏԱՐԻ-
ՉՔՆ ԱՒՐՀՆԻՆ Յ Ա̅Յ̅:

***Ծանոթ.*** ՇՐՈՒԱՆԱ-ն կարելի է կարդալ նաև ՀՐՈՒԱՆԱ, ԲԱՀՐԻ-ին գրված է ԲՍՀՐԻ, ՀԵՍԱՐԻ-ն՝ ՀԵՎԱՐԻ:

***1070. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ***. հարավային պատին կից որմնասյան կորության վրա, ներքուստ, 7 տող.



ԿԱՄԱՒՆ ԱՅ ԵՍ՝
ՎԱՐԴԱՆ ԵՒ ԵՂԲԱՐ
ԻՄ ԱՄԻՐԱՅՆ, ՄԻԱԲԱՆ-
ԵՑԱՔ ՄՇԱԿԱՎԱՆԻ-
Ց Ա[ՍՏՈՒԱ]ԾԱԾՆԻՍ, [ԻՄ Հ]ԱԼԱԼ
ԻՆՉԻՑՍ Ե[ՏՈՒ]...
Յ[Ա]Ղ[ԱՒ]ԹՍ [ՅԻՇԵՑԷՔ]:

***Ծանոթ***. Այս վկայագրում հիշատակված է վանքի անունը՝ Մշակավանք:

***1071. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ***. հարավային պատին, ներքուստ, 6 տող.



ԵՄ՝ ՀԱՍԱՆ, ՄԻԱՅԲԱՆ-
ԵՑԱՅ ՍԲ Ա[ՍՏՈՒԱ]Ծ[ԱԾՆԻԱ] ԵՒ ԱՌԱՋՆ-
ՈԴ ՀԱՍՏԱՏԵՑ Ի Տ-
ԱՐԻՆ :Ա: ԺԱՄ Ի ՎԱՐԱԳ[Ա]
ԽԱՉԻՆ: ՈՎ ԽԱՓԱՆ[Է] ԻՄ ՄԵՂԱՑՍ ՏՐ Է:

*Հրատ.* «Էջմիածին», 1959, Գ, 56:

***1072. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ***. հարավային պատին, ներքուստ, հողմահարված, 8 տող.



[ԵՄ՝ . . . ՄԻԱԲ]ԱՆԵՑԱ
[ՄՇԱԿԱՒԱՆՍ], ԵՒ ԵՏՈՒ
. . . . Ա[ՍՏՈՒԱ]ԾԱԾ.
[ՆԻՍ: ՌԸՍՏԱԿԷ]Ս ԵՒ ԱՅԼ
[ԵՂԲԱՐՔՍ ՀԱՍ]ՏԱՏԵ
[ՑԱՔ] . . . ԺԱՄ ՉՎ-
[ԱՐԱԳԱ ԽԱՉԻՆ: ՈՐ] ԽԱՓԱՆ
[Է]՝ ԴԱՏԻ ՅԱՅ:

***Ծանոթ***. Արձանագրության գրչագիր ընդօրինակությունները վերցված են Լ. Բարսեղյանի հավաքածուից: Վերականգնումներն անվիճելի համարելու հավակնություն չկա:

*1073. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ*. մուտքի հյուսիսային կողի նեղ հարթության վրա, արտաքուստ (երեսով դեպի գավիթ), երկյուն, 13 տող.



| | |
|---|---|
| ՅՈՒՍ | ՏԱՑԱ |
| ՌՎ Ա | Ն Ի ՏԱ |
| ՆՍԱՅԻ | ՐԻՆ :Բ: (2) |
| Ն Ա̅Յ̅ Ե | ԱԻՐ ԺԱՄ |
| Ս՝ Պ⌊Ա⌋ՐՈՒ- | Ի ՏԱԻՆ |
| ԽՍ ՄԻԱԲ | Ի Ս⌊Ր⌋ԲՈՅ |
| ԱՆԵՑԱ | ՍԱՐԳՍ |
| Յ Ս⌊Ր⌋ԲՈՅ | Ի: ԿԱՏ |
| Ա⌊ՍՏՈՒԱ⌋ԾԱԾՆ | ԱՐԻՉ⌊Ք⌋ |
| ԻՍ ԵՒ Ա | Ն ԱԻ⌊Ր⌋ՅՆ |
| ՈԱՉՆ | ԻՆ Ա̅Յ̅: |
| ⌊ՈՐԴ⌋Ք ՍՈՐ | |
| ԱՅ ԽՈՍ | |

*1074. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ*. արտաքուստ (գավթի մեջ), արևմտյան մուտքի գլխի կիսակամար ստորին շրջունքին, 3 տող.



ԵՍ՝ ՌԸՍՏԱԿԱՅՍ ԵՒ ԱՅԼ ՄԻԱԲԱՆՔՍ, ՅԱՍՏԱՏԵՑԱՔ Ի ՏԱՐԻՆ :Բ: ԺԱՄ.
:Ա: (1) ԱԲԵՍԱԼԱՄԻՆ, :Ա: ԱՉԸՉԻՆ՝ Ի ՏԱԻՆԻ Ս̅Բ̅ ՔԱՌԱՍՆԻՑ:
ՈՐ ԽԱՓԱՆԷ՝ ՄԵՐ ՄԵՂԱՑՍ ՏԷՐ Է ԱՌԱՋԻ Ա̅Յ̅:

*Հրատ.* Բարխուդարյանց. 385, «Էջմիածին».1959, Գ, 57:

*Ծանոթ.* Բարխուդարյանցը ԱԲԵՍԱԼԱՄԻՆ կարդացել է Աբեսալայ, բաց է թողել նույն տողի Ս̅Բ̅ բառը: Բարսեղյանը նույն անունը կարդացել է Աբեսախրին:

*1075. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ*. հյուսիսային պատին, ներքուստ, 7 տող.

[ԿԱՄԱԻՆ Ա̅Յ̅] ՅԱՍ-
[ՏԱՏԵՑԱԻ Ի Տ]ԱՐԻ
[Ն.. Ժ]ԱՄ Ի ՍԲ ՅԱԿՈԲԱ Տ[ԱԻ]Ն
[ԻՆ] . . . ԱԵՂ
. . . . ԵԿԵ
. . . [ՈՐ ԽԱ]ՓԱ
[ՆԵ ԻՄ] ՄԵ[ՂԱՑՍ] Տ̅Ր̅ [է]:

*Ծանոթ.* Այս և հաջորդ արձանագրությունը հողմահար ու եղծված է, և անկարելի է ամբողջացնել դրանք, պարզ է, սակայն, որ գրվել են նվիրատվությունների առթիվ: Որոշ լրացումներ արվել են պայմանականորեն:

**1076. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ**. հյուսիսային պատին, ներսից, 4 տող

ԿԱՄ[ԱՒՆ] Ա̅Յ̅ ՅԱՍՏԱՏԵՑ
ԱՒ Ի [Տ]ԱՐ
ԻՆ . . . ԱՒՐ
Ն Ի . . . ԻՒՐ

**1077. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ**. արտաքուստ (գավթի մեջ), մուտքից վերև, կլոր պատուհանի տակ, կիսաեղծ, 5 տող.

ԿԱՄԱւ ԵՑԻՄՈՐԴԻՆ ''ՊԻ ԱՐՆԻՔՍՓՈԽԵՑԱՒ
ԵՒԿԱՏԱ Ձ''ԿԻՄՈՅ Ղ ԲԱՐԱԹԻՆՏՈՒՆ
ՄՇԱԿԱ ՅԻՇԱՏԱԿԶԱՒԱԿ ՈՒԹԱԳ
ԱՒՈՐՈՒԹԲ ԾԻ ԱՆԻՆՀԱՅՐԳՐԻԳՐ Ի ՄԻԱ ԱՆՔՍՀԱՍ
ՏԱՏԵՑ ՐՍ ՏԱՆԻ ՄԱԾԱԾՆԻՍ

ԿԱՄԱՒՆ[ Ա̅Յ̅ ] . . . ԵՑ ԻՄ ՈՐԴԻՆ՝ [Ա]ՊԻՐԱՏՆ, Ի Ք̅Ս̅ ՓՈԽԵՑԱՒ
ԵՒ ԿԱՏԱ[ՐԵՑԱՒ Զ]ԱՒԱԿ ԻՄՈՅ . . . . ԶԲԱՐԱԹԻՆ ՏՈՒՆ
ՄՇԱԿԱ[ՎԱՆԻՑ] . . . ՅԻՇԱՏԱԿ ԶԱՒԱԿ[ԱՑ] . . . ՈՒ ԹԱԳ-
ԱՒՈՐՈՒԹ[ԵԱՄ]Բ ...ԾԻ . . . ԱՆԻՆ, ՀԱՅՐ ԳՐԻԳՈՐ[Ե]Ի ՄԻԱ[Բ]ԱՆՔՍ ՀԱՍ-
ՏԱՏԵՑ[ԻՆ] . . . ՐՍ . . . [Ի] ՏԱՒՆԻ Ս̅Բ̅ Ա[ՍՏՈՒԱ]ԾԱԾՆԻՍ:

*Ծանոթ*. Մշկավանքի արձանագրությունները, ցավոք, հազվադեպ են հաղորդում վանքի առաջնորդների անունները: Այս վկայագրերից մեզ հայտնի են ընդամենը հայր Գրիգորի, Ըռստակեսի, Յովանեսի անունները, սակայն, որն է որին հաջորդել՝ մնում է անհայտ: ***Բարաթին տուն*** կապակցությունը թերևս հարկահավաք պաշտոնյայի կացարան իմաստն ունի, որը, սակայն, տարակուսելի է մնում, թերևս ավելի հավանական կլիներ ***բարաթի ետուն:***

**1078. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ**. ներքուստ, հյուսիսային պատի արևմտյան մասում, 4 տող.

ԿԱՄ ՆԱՅՀԱՍՏԱՏԵՑԱՒԻ
ՏԱ ԺԱԲՈՒՐ''''ՐԱՆ
ԱԻ ԿՂԻՐ ՓԱՆ
ԵԴ ԻՏ̅Է̅

ԿԱՄ[ԱՒ]Ն Ա̅Յ̅ ՀԱՍՏԱՏԵՑԱՒ Ի
ՏԱՐ[ԻՆ . . . Ժ]ԱՄ ԲՈՒՐ . . . ՐԱՆ-
ԱԻ . . . ԿՂԻ, Ո[Ր ԽԱ]ՓԱՆ-
Ե՝ Դ[ԱՏԻ] Ի Տ̅Է̅:

*Ծանոթ*. Արձանագրությունը շատ է եղծված, և հաճախ միայն առանձին տառեր են նշմարվում: Այս և մի շարք այլ արձանագրությունների ***կամաւն Այստուծոյ հաստատեցան ի տարին*** կրկնվող շարակցությունից հետևում է, որ նվերներն ստանալուն պես՝ դրանք գրանցվել են վանքի Քոթակում, այնուհետև, ավելի ուշ, սահմանել են պատարագաժամերը, և ապա դրանից հետո միայն պարտավորավճիռները փորագրել պատերին:

***1079. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ.*** հարավային պատին, դրսից, 6 տող.



ՅԱՆՈՒՆ ՅԱՅ Ե[Ս]՝ ԸՌԸ-
ՍՏԱԿԷՍ, ԵՒ ԱՅԼ ԵՂԲԱՐՔ[Ս],
ՀԱՍՏԱՏԵՑԱՔ Ի ՏԱՐԻՆ
:Գ: (3) ԺԱՄ ՎԱՐԴԱՆԱ՝ ՅՈՀԱՆՈՒ
ԵՒ ՅԱԿՈԲԱՅ ՏՈՒՆԻՆ: ՈՐ ԽԱ-
ՓԱՆԷ՝ ԴԱՏԻ Ի ՏՆ:

*Հրատ.* «Էջմիածին», 1959, Գ, 56:

***1080. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ.*** հարավային պատին, արտաքուստ, նախորդի կողքին, 5 տող.



ՅԱՆՈՒՆ ԱՅ ԵՍ՝ ԸՌԸՍՏԱԿԷՍ,
ԵՒ Ա[Յ]Լ ԵՂԲԱՐՔՍ, ՀԱՍՏԱՏԵՑԱՔ
Ի ՏԱՐԻՆ :Գ: ԱՒՐ ԺԱՄ ԱՁԱՏԻՆ՝
Ս[Ր]ԲՈՅՆ ՊՈՂՈՍԻ ԵՒ ՊԵՏՐՈՍԻ ՏՈՒՆ-
ԻՆ: ՈՐ ԽԱՓԱՆԷ՝ ԴԱՏԻ ՅԱՅ:

*Հրատ.* «Էջմիածին», 1959, Գ, 56:

***Ծանոթ.*** Երկու արձանագրություններն էլ լավ են պահպանված, անեղծ, եկեղեցու շինարարության ժամանակակիցն են: Հետաքրքիր է, որ ոչ մի կապգիր չկա, ինչը չի հանդիպում այլուստ, քանի որ կապգրերն օգտագործվում են Ձ-է դարերից սկսած (Եղվարդ, Հռիփսիմե): Երկու դեպքում է գործածված ***տունին-ը տաւնին*** բառի բարբառային արտահայտչաձևն է:

***1081. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ.*** արտաքուստ, հարավային պատի արևելյան մասում, 6 տող.



. . . ԳՐԱԾՍ ԳՐԳ[ՈՐ]
. . . ԿՆ[Ո]ՋՆ՝ ԹԷԻԿԱՆՆ ԵՒ . . . .
ԿՆՈՋՆ: ՈՎ ԿԱՐԴԷՔ ՅԻՇԵ[ՑԷՔ] . . .
ՏՐ ՅՍ ՔՍ ԵՒ . . .
............
............

***Ծանոթ.*** Արձանագրությունը խիստ հողմահարված է, պահպանվել են բերված տողերի որոշ հատվածները: Վերջին երկու տողում կարդացվում են միայն առանձին տառեր:

***1082. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ.*** արտաքուստ, հարավային պատի արևելյան մասում, նախորդից ներքև, նույն քարի վրա, մեծ և գեղեցիկ տառերով, 5 տող.



...[ՄԻԱԲԱՆ ԵՂԲԱՐՔՍ]
ԽՈՍՏԱ[Ց]ԱՔ ...
ԱՌԱՋԻ . . . ՈՐԻՆ . . .
ԻՆ. ՈՎ ԽԱՓ⌈Ա⌉ՆԷ ՈՉ . . .
ԱՑԻ . . . ՅԱՐԱՉ . . .

***Ծանոթ.*** Այս արձանագրությունը ևս նախորդի նման գրեթե ամբողջությամբ հողմահարված է:

ԳԱՎԻԹ

***1083. ԳԱՎԻԹ.*** ներքուստ, արևելյան պատի հարավային մասում, 6 տող.



⌈Ե⌉Ս՝ ԱԽԱԶԱՐՍ, ՄԻԱԲԱՆ-
⌈ԵՑ⌉ԱՅ Մ̅Բ̅ Ա⌊ՍՏՈՒԱ⌋⌈ԾԱԾ⌉ՆԻՍ, ՌԸՍ-
⌈Տ⌉ԱԿԷՍ ԵՒ ԱՅԼ ՄԻԱ⌈Բ⌉ԱՆՔ-
Ս ԽՈՍՏԱՑԱՔ :Գ: (3) ԺԱՄ ԻՎՈ-
ԱՆՈՒ ԵՒ ՅԱԿՈԲԱՅ ՏԱՒՆԻՆ:
⌈Ո⌉Վ ԽԱՓԱՆԷ՝ ՆՈՐԱՅ ՄԵՂԱՑ Պ⌊ԱՐՏԱԿԱՆ Է⌋:

***Ծանոթ.*** ԻՎՈԱՆՈՒ-ՅՈՎԱՆՈՒ անսովոր ձև է: Վերջին բառից միայն Պ տառն է գրված: Նկատի առնելով Ռստակես վանահոր անունը՝ արձանագրությունը պետք է թվագրել ԺԳ դարի կեսով: Միաբանողի անվան Զ-ն նման է Ջ-ի, ուղիղ ձևն է *Աղազար*.
*Նվիրատուի անունը լուսանկարում պարզ կարդացվում է ԼԱԽԱԶԱՐ (խմբ.):*

***1084. ԳԱՎԻԹ.*** ներքուստ, նախորդի ներքևում, 7 տող.



Ի ԹՈՒԱԿԱՆՈՒԹԵ[ԱՆՍ] ՀԱ[ՅՈՑ] :ՈՂԱ: (1242):
ԱՅՍ ԻՄ ԳԻՐ Է՝ ԱՋԱՏԻՍ, ՈՐ
[Ր] ՄԻԱԲԱՆԵՑԱՅ Մ̅Բ̅ Ա[ՍՏՈՒԱ]ԾԱ-
ԾՆԻՍ ԵՒ ԱՅԼ ՄԻԱԲԱՆԱՑՍ ԵՒ
ԽՈՍՏԱՑԱՆ Ի ՏԱՐ[ԻՆ] :Գ: (3) ԺԱՄ Ի
ՏԱՒՆԻ⌈Պ⌉ՈՂՈՍԻ ԵՒ ՊԵՏՐՈՍ[Ի]:
ՈՎ ԽԱՓ[ԱՆԷ՝ ԴԱՏԻ Ի] Տ̅Է̅:

***Ծանոթ.*** Վանքի պատերի վկայագրերից թվագրված են ընդամենը երեքը, որոնց մեջ սա հնագույնն է: Մյուսը (խաչքար) թվագրված է 1291 թ., երրորդը՝ 1247 թ., չորրորդը՝ 1263: Մի խաչքար էլ կա՝ 1652 թ., 61 արձանագրության մեջ հինգը թվակիր, երեքը վանքի պատերին, երկուսը՝ խաչքարի վրա, ինչը չափազանց քիչ է վանքի կառուցման

կամ առաջնորդների պատմության հարցերը պարզելու համար: 3-րդ տողում ակնհայտորեն բաց է թողնվել ժամանակի վանահոր անունը, որը լրացնելով, ինչպես և շարահյուսական անհարթությունը շտկելով՝ կունենա ԾԻՆՍ: ՌՍՏԱԿԷՍ ԵՒ ԱՅԼ ՄԻԱԲԱՆՔՍ շարակցությունը:

*Առաջին տողի վերջնամասը խիստ եղծված է, և Ա տառից հետո վերծանությունը՝ բեկական (խմբ.):*

***1085. ԳԱՎԻԹ.*** նախորդից վերև, կամարի տակ, 3 տող.



ՏՐ ԱԾ ՈՂՈՐՄԵԱ-
Յ ԱՁԱՏԻՆ ԵՒ ԻՒՐ ԾՆ-
ՈՂԱՑՆ: ԱՄԷՆ: [Ի ԹՎԻՆ] :ՈՂԶ: (1247):

*Հրատ.* Բարխուդարյանց, 386, «Լրաբեր», 1978, 4, 70:

***Ծանոթ.*** Վանքի ասկավարիվ թվակիր արձանագրություններից է, որը նույնպես հաստատում է գավիթի շատ ավելի վաղ կառուցված լինելու փաստը:

***1086. ՏԱՊԱՆԱՔԱՐ.*** տափակ, գավթի հարավարևելյան անկյունում, երեսին՝ 4 տող.



ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍ-
Տ ԱՁԱՏԻՆ: ՅԻ-
ՇԵՑԷՔ ՅԱՂ-
ԱԻԹՍ ՁԵՐ:

***Ծանոթ.*** Նախորդ երկու արձանագրությունների մեջ հիշատակված անձն է՝ մահացած 1247-ին կամ մի փոքր ավելի վաղ: Ազատը, թերևս, նշանավոր գործիչ է, որը հիշվում է ոչ միայն վանքի մի քանի արձանագրություններում, այլև արժանացել է գավթում թաղվելու պատվին:

***1087. ԳԱՎԻԹ.*** հարավային պատի արևմտյան անկյունում, արտաքուստ, արևի ժամացույցի տակ, 7 տող.



Ի ԹՎԱԿ[ԱՆԻՍ ՀԱՅՈՑ] :Չ.Ժ.Բ: (1263): ԵՍ՝ ՎԱՍԱԿ,
ՍԻՍԽԱԹՈՒՆՍ, ԷԳԻ ԵՏ-
ՈՒ Ա[ՍՏՈՒԱ]ԾԱԾՆԻՍ: ՌԸՍՏԱԿ-
ԷՍ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ՏՎԱՔ :Բ: (2)
ԺԱՄ ԱՒԵՏԵ[Ա]ՑՆ ՏԱՒՆԻՆ: ՈՎ
ՋԻՐՈՒՐ ՏԱ ՅԱՅ ԱՆԻԾԱԾ ԵՂ-
ԻՑԻ:

*Հրատ.* Բարխուդարյանց, 386. «Լրաբեր», 1978, 4, 71:

***Ծանոթ.*** Այս արձանագրությունը այն սակավաթիվներից է, ուր հիշատակված է թվականը և վանքի առաջնորդի անունը: Ռստակեսի առաջնորդության շրջանի մասին այս վիմագիրը տալիս է միայն մոտավոր պատկերացում: Մ. Բարխուդարյանցը :Բ: ԺԱՄ-ը կարդացել է :Գ: ԺԱՄ: Վասակը գուցե թե Մահկանաբերդի Արծրունիների կամ էլ Կյուրիկյանների ընտանիքից է: Անշուշտ, հատուկ հետաքրքրություն է ներկայացնում 7-րդ տողի ՋԻՐՈՒՐ ՏԱՅ աննախադեպ բարբառային դարձվածը, որն ունի *խափանի, խախտի* իմաստը:

Ի դեպ, թվականի տասնավորը (Ժ=10) մոռացել է գրիչը և հետո փորագրել վերևում, արևի ժամացույցի քարի վրա: ***ԷԳԻ ԵՏՈՒ*** եզակի դեպքը պետք է որ հոգնակի լիներ՝ էգի ետուաք (կամ տուաք), սակայն գործարքը կատարել է Սիսխաթունը, և Վասակի անունը հիշվում է իբրև հարգանք:

***1088. ԳԱՎԻԹ.*** արտաքուստ, հարավային պատի արևմտյան մասում, արևի ժամացույցի թվատառերը.



Ա Բ Գ Դ Ե Զ Է Ը Թ Ժ Ա Բ

***Ծանոթ.*** Անցնելով Ժ թիվը սովորաբար գրվում է ԺԱ, ԺԲ: Ժ-ի բացակայությունը թերևս պետք է դիտել որպես յուրօրինակ համառոտագրություն, որը վիմագրերում հաճախ է հանդիպում:

***1089. ԳԱՎԻԹ.*** ներքուստ, արևելյան պատի հյուսիսային մասում (եկեղեցու մուտքից հյուսիս), որմնամույթի արևմտյան երեսին, 5 տող.



ԿԱՄԱՒՆ ԱՅ
ՀԱՍՏԱՏԵՑԱՒ Ի ՏԱՐԻ-
Ն :Ա: (1) ԺԱՄ ՀՈՒՆԱՆ ՔԱՀ[ԱՆԱ]ՅԻՆ, Ի
ՏԱՒՆԻ ՄԲ ՅԱԿ[Ո]Բ[Ա]: ԿԱՏԱՐԻ-
ՉՔՆ ԱՒՐՀ[Ն]ԻՆ ՅԱՅ:

***Ծանոթ.*** Այստեղ ևս միաբանության ոչ միայն առաջնորդի անունը չկա, այլև առաջնորդության ակնարկը, և արձանագրված փոխհատուցման վճիռը հաստատված է լրիվ անդեմ կրավորական եղանակով:

*1090. ԳԱՎԻԹ.* նախորդից ներքև, որմնամույթի հիմքի վրա, 5 տող.



ԿԱՄԱՒՆ ԱՅ ՀԱՍՏԱՏԵՑ-
ԱՒ Ի ՏԱՐԻՆ :Բ: (2) ԱՒՐ ԺԱՄ Ի ՏԱՒՆԻ
ԲԱՐ[Ս]ՂԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ :Ա: (1) ՎԱՐԴ-
ԷԳՈՅՆԻՆ. :Ա: (1) ԲԱՆՈՒԳԻՆ: ԿԱՏԱ-
ՐԻՉԲ ԱՒՐՀ[ՆԻՆ ՅԱՅ]:

*Հրատ.* «Էջմիածին»,1959, Գ, 57:

***Ծանոթ.*** *Վարդէգոյն* անվան ուղիղ ձևն է *Վարդագոյն*, *Բանուգինը*՝ *Բանուկ*. Լ. Բարսեղյանը *Բանուգին* կարդացել է *ԲԱՆՈՂ*.

*1091. ԳԱՎԻԹ.* եկեղեցու մուտքից հյուսիս, երեք խորշավոր զարդից վերև, քիվի տակ, 1 տող.



ՔՍ ԱԾ ՈՂՈՐՄԵԱ ՏԻԿՆՈՋՆ: ԱՄԷՆ:

***Ծանոթ.*** *Տիկնոջն* այս դեպքում իգական անձնանուն է. *տի-մեծ* կին գոյացումով, ոչ կույսերի մայրապետ:

*1092. ԳԱՎԻԹ.* արևելյան պատի հյուսիսային մասում, 11 տող.



[ԿԱՄԱՒՆ ԱՅ]
ԿԱՄԱՒՆ ԱՅ ԵՍ՝ ԽԱ-
[ՉԱՏ]ՈՒՐ ՔԱՀԱՆԱ,
ՅՈՒՍԱՑԵ[Ա]Լ Ի ՊԱՐ
ԳԵՒՆ ԱՅ ԷՏՈՒ Ի Հ-
ԱԼԱԼ ԸՆՉԻՑ ԻՄՈՑ
Ի ՏՈՒՆՍ ՏՆ : ԵՒ ՍՊԱ-
ՍԱՒՈՐՔ ՍՈՐԱ ԽՈՍՏ-
ԱՑԱՆ :Գ: (3) ԺԱՄ ՏԱՐԵՆ
ԻՆՉ [Ե]Ւ ԱՄՈՒՍՆՈ ԻՄ
Ի Տ[ԱՒՆԻ Ծ]ԱՌԱԶԱՐԴ[ԱՐԻՆ]:

***Ծանոթ.*** Այստեղ ևս առաջնորդի փոխարեն հանդես են գալիս միաբանները (սպասավորք): Պարզվում է, որ հատուցման պարտավորությունը նշանակում է ոչ թե առաջնորդը, այլ վանքի միաբանները: Սպասավորք բառը առաջնորդի անվան փոխարեն գործածված է նաև այլ արձանագրություններում: Առաջին տողը գրված է փոքր տառերով և ապա կրկնված է ավելի գեղատառ: Ի ՏՈՒՆՍ ՏՆ (տեառն) վերաբերում է վանքին, եկեղեցուն:

***1093. ԳԱՎԻԹ.*** հյուսիսային պատին, ներքուստ, կիսաեղծ, 2 տող.



ԿԱՄԱՒՆ ԱՅ ՀԱՍՏԱՏԵՑԱՒ Ի Տ-
Ա[ՐԻՆ] .... ԺԱՄ ԱՒԱ[Գ ՇԱ]ԲԱԹ [ԱՒՐՆ]:

***Ծանոթ.*** Ընդօրինակությունը վերցված է Լ. Բարսեղյանի հավաքածուից: Վերծանությունն անվիճելի չէ:

***1094. ԳԱՎԻԹ.*** արևելյան պատի հյուսիսային մասում, անմիջապես նախորդի տակ. 5 տող.



ԿԱՄԱՒՆ ԱՅ ՀԱՍՏԱՏԵՑ-
ԱՒ Ի ՏԱՐԻՆ :Բ: (2) ԺԱՄ Ի ՏԱՒ-
ՆԻ ՍԱ[Հ]ԱԿԱ՝ ՊԱՐԹԵՒ Ի-
ՇԽԱՆԻՆ ԵՒ ԱՄՈՒՍ[Ն]Ո[Յ]
ԿԱՏԱՐԻՉՔ[Ն] ԱՒՐՀՆԻՆ [ՅԱՅ]:

***Ծանոթ.*** Մշկավանքի վիմագրերում սովորական է նվերներ տվողների, ինչպես և հատուցման վճիռներ կայացնողների նկատմամբ ցուցաբերվող «անտարբերությունը»: Այս դեպքում ևս բավարարվել են ***հաստատեցաւ*** ձևակերպումով՝ չտալով անգամ վանահոր անունը, և թե երբ և ինչ է տրվել հաստատությանը, որի դիմաց կաթողիկոս սուրբ Սահակի (387-436) տոնին տարեկան երկու ժամ է հատկացվել Պարթև իշխանի և կնոջ համար՝ կրկին անունը չտալով:

***1095. ԳԱՎԻԹ.*** արևելյան պատի հյուսիսային մասում, նախորդի կողքին, 6 տող.



[Կ]ԱՄԱՒՆ ԱՅ ԵՄ՝ ՀԱՅՐԱ[ՊԵՏ]Ս
ԵՒ ԳՈՀԱՐ ՄԻԱԲԱՆԵՑԱՔ Ի ՄԲ Ա[ՍՏՈՒԱ]ԾԱ[Ծ]
ԻՆՍ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴՔ ՍՈՐԱ ՀԱՍՏԱՏ-
ԵՑԻՆ Ի ՏԱՐԻՆ :Բ: (2) ԱՒՐ ԺԱՄ Ի ՏԱՒՆ-
Ի ԱՏՈՄԵ[Ա]ՆՑ: ՈՐՔ ԽԱՓԱՆԵՆ ՄԵՐ ՄԵՂԱՑ[Ն]
[ՏԵՐ] Է՝ :Ա: (1) ԺԱՄՆ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ, :Ա: (1)
ԳՈՀԱ[ՐԻՆ]:

***Ծանոթ.*** Ստացած պատարագաժամերը գրվել են վերջում, մինչդեռ այն պետք է լիներ ***Ատոմենց*** բառից անմիջապես հետո:

*1096. ԳԱՎԻԹ.* հյուսիսային պատին կից մույթի արևմտահայաց երեսին, 6 տող.



ԿԱՄԱՒՆ ԱՅ ԵՍ՝ ՍԱՂՈՒՆՍ, ՄԻԱԲԱ-
ՆԵՑԱ Ի ՍԲ Ա[ՍՏՈՒԱ]ԾԱԾԻՆՍ: ԵՍ՝ ԸՈԸՍՏԱԿԵ-
Ս ԵՒ ԱՅԼ ՄԻԱԲԱՆՔՍ, ՀԱՍՏԱՏԷՑԱՔ
Ի ՏԱՐԻՆ :Բ: (2) ԺԱՄ ԵՐԿՐՈՐԴ ԳԱԼԸՍՏԵ[Ա]Ն ԱՒՐՆ.
:Ա: (1) ՍԱՂՈ[Ւ]ՆԻՆ, :Ա: (1) ՄԱՆԱԻՆ: ՈՐ
ԽԱՓԱՆԷ՝ ԴԱՏԻ ՅԱՅ:

*Ծանոթ. Մանաին* անսովոր թվացյալ անձնանվան տարածված ձևը *Մանանան* է, և, տվյալ դեպքում, *նա* վանկը պետք է կրկնակի կարդալ:

*1097. ԳԱՎԻԹ.* արևմտյան պատի հյուսիսային մասում, ներքուստ, 7 տող.



ԿԱՄ[ԱՒՆ]ԱՅ ԵՍ՝ ՏԻԿՆ-
ԱՆՑՍ, ՄԻԱԲԱՆԵՑ-
ԱՅ ՍԲ Ա[ՍՏՈՒԱ]ԾԱԾՆԻՍ: ԵՍ՝
ՌԸՍՏԱԿԷՍ ԵՒ
ՄԻԱԲԱՆՔՍ, ԷՏ-
ՈՒՆ :Ա: (1) ԺԱՄ Ի ՏԱՒ-
ՆԻ ԹՈՄԱՅԻ ԱՌԱՔԵԼՈՅ:

*Ծանոթ. ԱԾԱԾՆԻՍ բառի Ն-ն գրիչը սխալմամբ փորագրել է երկու Ծ-երի միջև եղած Ա-ի ձախ ստեղնին (Խմբ.):*

*1098. ԳԱՎԻԹ.* հարավային պատի արևելյան մասում, ներքուստ, 6 տող.



ԵՍ՝ ՄԵԾԻ[Ր]ԱՅ, ՄԻԱԲԱՆ-
ԵՑԱՅ ՍԲ Ս[ՏՈՒԱ]ԾԱԾՆԻՍ: ՌԸՍ-

ՏԱԿԷՍ ԵՒ ԱՅԼ ՄԻԱԲԱ-
ՆՔՍ ԽՈՍԱՑԱՔ :Ա: (1) ԺԱՄ Ի ՏԱՒՆԻՆ
ԿԻՒՐՂԷԻՆ ԵՄԵՑԻ: ՈՎ ԽԱՓԱՆԷ՝ ՆՈՐԱՅ ՄԵՂԱՑ ՏԷՐԷ: ԱՄԷՆ:

***Ծանոթ***. Արձանագրության որոշ մասեր ու վերջին մանրատառ տողը կիսաեղծ ու դժվարընթեռնելի են: ***Մեծիրայ*** անվան Ր-ն գրիչը բաց է թողել և հետո ավելացրել տողի գլխին: ***ԱմԷն*** բառը սովորականի պես ոչ թե վերջում, այլ երրորդ տողի շարունակության վրա է: ***եմեցի***-ն թեև պատվի նշան չունի, սակայն այն աներկմիտ ***երուսաղեմեցի*** է, ուրկից՝ Երուսաղեմի հայրապետներից է Կյուրեղ հայրապետը:

***1099. ԳԱՎԻԹ.*** հարավային պատի կենտրոնական մասում, ներքուստ, 5 տող.



ԿԱՄԱՒՆ ԱՅ ԵՍ՝ Ս[Ա]ԳԴՈՒԽՏ, ՄԻ-
ԱԲԱՆԵՑԱ ՄԲ Ա[ՍՏՈՒԱ]ԾԱԾՆԻՍ: ԱՌԸՍ-
ՏԱԿԷՍ ԵՒ ԱՅԼ ԵՂԲԱՐՔՍ ԷՏՈՒՆ
[Ի ՏԱՐԻՆ] :Ա: (1) ԱՒՐ ԺԱՄ [Ի ՏԱՒ]ՆԻ
ՍԱՆՏԸԽՏՈՅ:
ՈՐ ԽԱՓԱՆԷ՝ ԴԱՏԻ Ի ՏՆԷ:

***Ծանոթ. Սագդուխտի*** փոխարեն սպասելի էր ***Սանդուխտ***.
*Հնարավոր է բուն անունը լինի ՍԱՀԱԿԴՈՒԽՏ (խմբ.):*

***1100. ԳԱՎԻԹ.*** հարավային պատի կենտրոնական մասում, 5 տող.



ԵՍ՝ ՄԱԹԷՈՍ ՔԱՀ[ԱՆԱ] ԵՒ ԱՄՈՒՍԻՆ [ԻՄ] ՄԻԱԲԱՆ-
ԵՑԱ[Ք] Ա[ԱՏՈՒԱ]ԾԱԾՆԻՍ ԵՒ ԷՏՈՒՆ Ի Տ-
ԱՐԻՆ :Բ: (2) ԱՒՐ ԺԱՄ ՄԲ ԳՐ[Ի]ԳՈՐ-
ԻՆ ԱՂՈՒՀԱՑԻՑՆ: ՈՎ ԽԱՓԱՆԷ՝
ԴԱՏԻ ՅԱՅ:

***1101. ԳԱՎԻԹ.*** ներքուստ, հյուսիսարևելյան որմնամույթի հարավային կողին, 4 տող



ԿԱՄԱՒՆ ԱՅ ՀԱՍՏԱՏԵՑԱՒ
Ի ՏԱՐԻՆ :Բ: (2) ԱՒՐ ԺԱՄ ԱՋԸՋԻՆ՝
Ի ՏԱՒՆԻ ՓԻԼԻՊՈՍԻ ԱՌԱՔԵԼ-
ՈՅՆ: ՈՎ ԽԱՓԱՆԷ՝ ԴԱՏԻ ՅԱՅ:

*Հրատ.* «Էջմիածին», 1959, Գ, 37:

*1102. ԳԱՎԻԹ.* Ներքուստ, գեղագիր, 3 տող.



ԿԱՄԱՒՆ Ա̅Յ̅ ՀԱՍՏԱՏԵՑԱՒ Ի Տ-
ԱՐԻՆ :Ա: (1) ԱՒՐ ԺԱՄ ԱՒԱԳ :Ե: ՇԱԲԱԹ
ԻՆ ԱՋՋԻՆ: ՈՎ ԽԱՓԱՆԷ՝ [ԴԱՏԻ ՅԱ̅Յ̅ ]:

*Ծանոթ.* Ինչպես երևում է՝ Ազիզը բավականին ունևոր է եղել, որ երկու անգամ նվիրատվություններ կատարելով՝ մի անգամ 2 պատարագաժամ է ստացել Փիլիպոս առաքյալի, մյուս անգամ՝ Ավագ Հինգշաբթի օրը:

*1103. ԳԱՎԻԹ.* Ներքուստ, հյուսիսարևելյան որմնամույթի արևմտահայաց կողին, 3 տող.



ԿԱՄԱՒՆ Ա̅Յ̅ ՀԱՍՏԱՏԵ-
ՑԱՒ Ի ՏԱՐԻՆ :Ա: (1) ԱՒՐ ԺԱՄ
ԱԼՄԿԱ՝ Ի ՏԱՒՆԻ ԿԻՐԱ
ԿՈՍԻ: ՈՎ ԽԱՓԱՆԷ՝ ԴԱՏ-
[Ի] Ի Տ̅Է̅:

*Ծանոթ.* Ինչպես երևում է՝ Ազիզը բավականին ունևոր է եղել, որ երկու անգամ նվիրատվություններ կատարելով՝ մի անգամ 2 պատարագաժամ է ստացել Փիլիպոս առաքյալի, մյուս անգամ՝ Ավագ Հինգշաբթի օրը:

*1104. ԳԱՎԻԹ.* Ներքուստ, հյուսիսային պատի կենտրոնական հատվածի արևելյան մասում, 5 տող.



ԿԱՄԱՒՆ Ա̅Յ̅ ՀԱՍՏԱՏԵՑԱՒ Ի ՏԱՐ-
ԻՆ :Բ: (2) ԱՒՐ ԺԱՄ ՍԵՒ ԱՒՇԻՆԻ ԵՒ
ԱՄՈՒՍՆՈՅ Ի[Ւ]ՐՈՅ՝ Ի ՏԱՒՆԻՆ ԵՓ-
ԵՍՈՍԻ ՄԱՆԿԱՆՑՆ: ՈՎ ԽԱՓ-
ԱՆԷ՝ ԴԱՏԻ Ի Տ̅Է̅:

*1105. ԳԱՎԻԹ.* հյուսիսային պատին, ներքուստ, 7 տող.

[ԿԱՄԱՒՆ Ա̅Յ̅ Հ]ԱՍՏԱ-
[ՏԵՑԱՒ Ի Տ]ԱՐ-
[ԻՆ] . . . ՅԻՏ
. . . . ԳԱՅ
. . . . ԻՆ
. . . [ՈՎ] ԽԱ-
[ՓԱՆԷ՝ ԴԱՏԻ Ի] Տ̅Է̅:

*1106. ԳԱՎԻԹ.* Ներքուստ, հյուսիսային կենտրոնական որմնամույթի հարավ նայող կողին, 5 տող.



ԿԱՄԱՒՆ Ա̅Յ̅ ՀԱՍՏԱՏԵՑԱՒ
Ի ՏԱՐԻՆ :Բ: (2) ԱՒՐ ԺԱՄ ԳԵ[Ո]ՐԳԱ Ե-
Ի ՄԱՒՐ ԻՒՐՈ՝ ԹԱՆԿԻՆ՝ Ի ՏԱՒՆԻ
ՀՈԳՈՅՆ ԳԱԼԸՍՏԵԱՆ: ԿԱՏ-
ԱՐԻՉՔՆ ԱՒՐՀՆԻՆ ՅԱ̅Յ̅:

*1107. ԳԱՎԻԹ.* Նախորդից ցածր, 5 տող.



ԿԱՄԱՒՆ ԱՅ ՀԱՍՏԱՏԵՑ-
ԱՒ Ի ՏԱՐԻՆ :Բ: ԱՒՐ ԺԱՄ ՍԱՐԳ-
ՍԻ՛ ՏԱՒՆԻ ԹԱԴԷՈՍԻ ԱՌ-
ԱՔԵԼՈՅՆ: ՈՎ ԽԱՓԱՆԷ՛
ԻՄ ՄԵՂԱՑՍ ՏԷՐ Է:

*1108. ԳԱՎԻԹ.* Ներքուստ, արևելյան պատի հյուսիսային մասում, կամարի ոտքին, երեսով հարավ, կիսաեղծ, 8 տող.



ԿԱՄ[ԱՒՆ ԱՅ ]ՀԱ[ՍՏ]-
ԱՏԵ[ԱՑ Ձ]ՀԱՅՐ
ԱՆԴՐԻ[ԱՍ ԵՒ Ա]ՅԼ ՄԻԱ-
ԲԱՆՔՍ[ՍՐ]ԲՈՅ ԵՒ-
ԱՆԻՍԻ[Ն] . . . ՈՒՆԱՑ
:Բ: (2) ԺԱՄ Ի ՏԱՊ-
ԱՆԻՍ: [ԿԱՏ]ԱՐԻՉՔՆ
Ա[ՒՐՀՆԻՆ Յ ԱՅ ]: ԱՄԷՆ:

*Ծանոթ.* Որոշ հատվածներ զգալիորեն հողմահարված ու դժվարընթեռնելի են, թերևս նաև երկմտելի:

*1109. ԳԱՎԻԹ.* Ներքուստ, նախորդից ցածր, կիսաեղծ, 6 տող.



ԿԱՄԱՒՆ ԱՅ ՀԱՍՏ-
ԱՏԵ[Ց]ԱՔ Ի ՏԱՐԻՆ :Գ: (3)
ԺԱՄ Մ[ՐԲ]Ո ԲԱՐՍ[Ղ]-
ԻՆ՛ ԱՂԱԽԻՆ ՆԱՐԸՆ
ՋԻՆ Ի [ՏԱՒՆԻ] ԹԷՈԴՈՍ
Ի ԹԱԳԱՒՈՐԻՆ ԿԱՏԱՐԻ:

*1110. ԳԱՎԻԹ.* հարավային պատի արևելյան մասում, ներքուստ, կիսաեղծ, 6 տող.



ԿԱՄԱՒՆ ԱՅ ՀԱՍ-
ՏԱ[Տ]ԵՑԱՒ :Ա: ԺԱՄ
. . Մ. . . . . Ի Տ-
ԱՒՆԻ . . . . . .
ԱՅԼ . . . .[ՈՎ ԽԱՓԱՆ]
Է՝ [ԴԱՏԻ ՅԱՅ]:

*Ծանոթ.* Վերջին բառերը կարող են լինել բանադրանքի այլ խոսքեր ևս:

*1111. ԳԱՎԻԹ.* արևելյան պատի հյուսիսային մասում, խաչի տակ, 1 տող.



ՅՈՎԱՆԻՆ:

*1112. ԳԱՎԻԹ.* ներքուստ, արևելյան պատի հարավային մասում, որմնամույթի խոյակի վրա, խաչի շուրջը, 2 տող.



ԽԱՉՍ
ԻՍ[Յ]ԴԱՆԻՆ:

***Ծանոթ.*** Նախորդ և այս միայն մեկական անվամբ հիշատակվողները, հավանաբար, շինության վարպետներ են: Առաջինում խաչանշանը փոխարինում է *խաչս* բառին, նման ծածկագրություն տարածված է հայոց մեջ:

*1113. ԳԱՎԻԹ.* արտաքուստ, արևմտյան պատի հարավային մասում, 4 տող.



ԿԱՄԱՒՆ ԱՅ ՅԱՍ-
ՏԱՏԵՑԱՒ Ի ՏԱՐԻՆ
:Բ: (2) ԱՒՐ ԺԱՄ ՎԱՐԴԱՆ-
Ա ԵՒ ՆԱՆԱՒՆ:

***Ծանոթ.*** Վերջին անվան կապգրերը կարելի է բացել և ԱՆՆԱՒՆ:

*1114. ԳԱՎԻԹ.* արտաքուստ, նախորդից վեր, խաչերի գլխին.



ԿԱՆԿ[Ն]ԵՑԱՒ ԽԱՉՍ Ի ԲԱՐԵԽԱՒՍՈՒԹԵ[ԱՆ] ԷԼԽԱԹՈՒՆԻՆ ԵՒ ԻՒՐ ԾՆՈՂԱՑ.

*1115. ԳԱՎԻԹ.* արտաքուստ, արևմտյան պատի հարավային մասի կենտրոնում, 8 տող.



ԿԱՄԱՒՆ ԱՅ ԵՍ ԱՆՏ-
ՐԻԱՍ ՔԱՅԱՆԱ, ԵՒ ԱՄՈՒ-
ՍԻՆ ԻՄ, ՄԻԱԲԱՆԵՑԱ[Ք]
ՄՔ Ա[Ս]ՏՈՒԱ[Ծ]ԱԾՆԻՍ ԵՒ Ս-
ՊԱՍԱՒՈՐՔ ՍՈՐԱ ՅԱՍ-
ՏԱՏԵՑԻՆ :Բ: (2) ԺԱՄ Ն-
ՈՐ ԿԻՐԱԿԷԻՆ ԱՆԽԱՓ-
ԱՆ: ՈՎ ՉԱՌՆԷ ՄԵՐ
ՄԵՂԱՑՍ ՏԷՐ [Տ] [է]:

*Հրատ.* «Էջմիածին», 1959. Գ. 57:

***Ծանոթ.*** Ի դեպ, նկատենք, որ վանքի արձանագրություններում, ինչպես և այս դեպքում, ԺԱՄ բառերում Ժ-ն գրվում է Ծ: Նախորդ հրատարակիչը VII տողի ՆՈՐ-ը կարդացել է ՈՐ:

*1116. ԳԱՎԻԹ.* արտաքուստ, արևմտյան պատին, նախորդից ներքև, 4 տող.



ԿԱՄԱՒՆ ԱՅ ՀԱՍՏԱՏԵՑԱՒ [Ի Տ]-
ԱՐԻՆ :Ա: (1) ԱՒՐ ԺԱՄ Ի ՏԱՒՆԻ ԲԱՐՍ-
ԴԻ ԱՐՉՈՅՆ: ԿԱՏԱՐԻՉՔՆ
ԱՒՐ[Հ]ՆԻՆ ՅԱՅ:

*Ծանոթ.* Դժվար է մեկնել, թե Աստվածաշնչի մեկնություններով ու միաբնակների կանոնների սահմանումով հանրահռչակ կեսարացի հայրապետը (որը դասվել է հայ եկեղեցու սրբերի շարքը), ինչու է ԱՐՉՈՅՆ կոչվում, գուցե թե ուզում է ասել՝ նրա թագավորական փափագո՞վ:

*1117. ԳԱՎԻԹ.* արտաքուստ, հարավային պատի կենտրոնում, երեք կողմերից եղծված, 5 տող.



...ՔՍ ՄԻԱԲԱՆԵՑԱՔ [ՄԲ ԱԾ ԱԾՆԻՍ]
ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴՔ ՍՈՐԱՅ Ե[ՏՈՒՆ]
Ի ՏԱՐԻՆ :Ա: (1) ԱՒՐ ԺԱՄ Ի ՏԱՒՆ[Ի]
ՊԵՏՐՈՍԻ ՀԱՅՐԱՊԵՏ[ԻՆ]:
[ՈՐ ԽԱ]ՓԱՆԷ ՄԵՐ ՄԵՂԱՑՍ ՏԷՐ [Է]:

*Ծանոթ.* Պետրոսը Քրիստոսի աշակերտն է, 12 առաքյալների գլխավորը, որը *հայրապետ* տիտղոս չի կրել, ուստի ենթադրելի է, որ Հայրապետը նվիրատու անձն է, որ Պետրոս առաքյալի տոնին ժամ-պատարագ է ստացել, այլապես արձանագրությունը մնում է անիմաստ, առանց նվիրատուի անվան, որը, սովորաբար, տեղ է գրավում սկզբում:

*1118. ԳԱՎԻԹ.* արտաքուստ, հարավային պատին, նախորդների մոտ, երեք կողմից եղծված, 5 տող.



. . . ԱՀ ՅՈՎԱՆԵՍ ԵՒ ԱՅԼ Մ[ԻԱԲԱՆ]-
ՔՍ ՁԻՄ ԸՆ[ՉԱՒ ԸՆԿԱ]ԼԱՆ ԵՒ ԵՏՈՒ[Ն] . . .
ԺԱՄ Ի ՏԱՒՆԻ ՍՐԲՈ[ՅՆ] . . .ԿԵ
ԻՆՉ ԽԱՅՉԱՏՐՈՅ: ՈՎ ԽԱ[ՓԱՆ]-
Է ՆՁՈՎ ՁՈՒԴԱՒ ԱՌՑԷ:

*Ծանոթ. Ա. Սաղումյանը երկրորդ տողում Ա. Բարխուդարյանի կամ Ալ. Մանուչարյանի կարդացած ԸՆՁԱՆ (ինձան) բառը վերծանել է ԸՆՉԱՒ (հավանաբար ինչք բառից) (խմբ.):*

*1119. ԳԱՎԻԹ.* նախորդից ներքև, 5 տող.



[Ի ԹՎԻՆ] [Չ]ԽԶ (1297) ԵՍ ՇԵՐԱՆՇ[Ա]Հ ԵՒ
[ԵՂ]ԲԱՐՔՍ ԷՏՎԱՔ ՁԱՅԳ
[Ի] ՍԲ Ա[ՍՏՈՒԱ]ԾԱԾՆԻՍ ԵՒ [ՄԻ-
ԱԲ]ԱՆՔՍ ՏՎԱՔ :Ա: (1) ԺԱՄ:
[ՈՎ ԽԱՓԱ]ՆԷ :ՅԺԸ: ԻՑ ՆԶՈՎԱԾ ԵՂԻՑԻ:

*Հրատ.* «Էջմիածին», 1959, Գ, 57, Ավագյան, ՎՊ, 136:

*Ծանոթ.* Թվականի հարյուրավորն իսպառ հողմահարված է: Բարսեղյանն այն կարդացել է Զ, չի ընթերցել վերջին տողը: Ս. Ավագյանը լրացումներով ընթերցել է առաջին 3 տողերը, թիվը լրացրել [Ի Թ Ո]ԽԶ (1197), երբ գավիթը դեռևս չկար, ուստի առավել հավանական է Ի Թւ ՉԽԶ (1297) վերականգնումը:

*1120. ԽԱՉՔԱՐ.* գավթի ներսում, արևելյան պատի տակ, գեղաքանդակ քիվին, ստորին մասում և սրբապատկերների մոտ, 5 տող.



Քիվին

ՏՐ ԱԾ ՈՂՈՐՄԵԱՅ ԹԱՇՏԻՆ ԵՒ ԻՒՐ ԾՆՈՂԱՑՆ,
ՈՐ ԶԽԱՉՍ ԿԱՆԳ[Ն]ԵԱՑ: Ի ԹՎԻՍ ՀԱ[Յ]ՈՑ :ՉԽ: (1291):

Սրբապատկերների վրա.

ԳԱԲՐԻԵԼ: ՍԲ Ա[ՍՏՈՒԱ]ԾԱԾԻՆ:
ՅՍ ՔՍ:
ՍԲ ՅՈՎԱՆ:
ՄԻՔԱԵԼ

*Հրատ.* Բարխուդարյանց, 386 (քերի), «Էջմիածին», 1959, Գ, 57 (քերի), «Լրաբեր», 1979, 9, 69:

*Ծանոթ.* Այս խաչքարը հայկական միջնադարյան արվեստի բացառիկ ստեղծագործություններից է թե՛ պատկերագրական հնարանքներով և թե՛ նրբին մշակումով: Առանձնապես ուշագրավ են քիվի շքեղ զգեստներով, հասակով մեկ կանգնած պատկերաքանդակները, ուր ներկայացված է մինչև այսօր խաչքարագործության ասպարեզում չհիտված ավետման տեսարանը, իսկ թևատակին արև-լուսինն են՝ իբրև խաչելության դրվագներ:

*1121. ԽԱՉՔԱՐ.* գեղաքանդակ և սրբապատկերներով զարդարված. կանգնած է գավթի մեջ հյուսիսային պատի տակ՝ քիվին, սրբապատկերների մոտ և խորանի շուրջը. 6 տող.



ՄԲ ԽԱՉՍ ԲԱՐ[ԵԽԱՒՍ] ԳՈՒԼԲՈՒՏԻՆ, ԻՒՐԻՒ
ՅՐԸՇՏԱԿ ԳԱԲ[ՐԻ]ԷԼ ԱՒԵՏԻ-
ՔՆ ՄԱ[Ր]ԻԱՄՈ[Ւ]Ի
ԹՎ[ԻՆ] ՌՃԱ (1652)
ՅՍ ՔՍ:
ԿԱՁ[ՄՈ]Ղ ԽԱՉԱՏՈՒՐ:

*Հրատ.* «Էջմիածին»,1959. Գ, 55 (կարդացել է մի մասը), «Լրաբեր», 1979, 9, 69:

***Ծանոթ.*** Խաչքարի վրա մանրանկարային շքեղությամբ ավետման տեսարանն է: Վախվորած Աստվածածինն ու Գաբրիել հրեշտակապետը շքեղ տարազով են, Հիսուսն ընկղմված է գահավորակի մեջ: Նույն մոտիվներով վարպետի խաչքարերից մեկը Վանաձորում է, մեկը՝ Նոր Վարագավանքում, մեկն էլ՝ Դովեղում:

*1122. ԽԱՉՔԱՐԻ* երկու բեկորներ, դրված են գավթի ներսում, հարավարևելյան անկյունում, քիվին, 1 տող.

ԱՄՌՄՇԻՆ:ԴՈՓԻՆ:ԽՈՅԴԱՆ . . . ԱՒՏ ՏՈՂՄ[Ի]ՇԻՆ, ԴՈՓԻՆ, ԽՈՅԴԱՆ[ԻՆ]:

*Հրատ.* Բարխուդարյանց, 386 (կարդացել է *Տէր Աստուած ողորմի ...*)

***Ծանոթ.*** Առաջին անձնանունը հնարավոր է կարդալ նաև ՏՈՐՄԻՇԻՆ:

*1123. ԽԱՉՔԱՐ.* մեծ, գեղաքանդակ, կանգնած է ճարտարապետորեն ձևավորված պատվանդանի հարավային թևում. գյուղի արևելյան եզրի հին գերեզմանատան մեջ, կիսավեր Ս. Աստվածածին մատուռից հարավ.
Թիկունքին.

Ի ԹԻՒՍ :ՈՂԴ: (1245): ԵՍ՝ ՍԱՐԳԻՍ ՔԱՀԱՆԱ, ԿԱՆԳՆ-
ԵՑԻ ՁԽԱՉՍ Ի ՅԻՇԱՏԱԿ ԻՆՁ ԵՒ
ՈՐԴՈՑ ԻՄՈՑ ԵՊԻՓԱՆԱ, ԵՓՐԵՄԻ ԵՒ
ԵՂԲԱՐՑ ՆՈՑՈՒՆՑ՝ ԱԼԵՔՍԻՈՍԻ,
ԻԳՆԱՏԻՈՍԻ ԵՒ ՀԱՒՐԵՂԲԱՒՐ ԻՄ-
Ո ՅՈՀԱՆՆԱ: ԱՐԴ, ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳ-
ԷՔ ՅԻՇԵՍՋԻՔ ՁՄԵԶ ԱՌ ՔՍ:
ՁՍԱՄ[ՈՒ]ԷԼ ԵՒ ՏԵՐԱՒԱԳ ԿԱՁՄՈՂ ԽԱ-
ՉԻՍ ՅԻՇԵՑԵՔ Ի ՏՐ:

*1124.* Քիվին, ջարդոտված, 1 տող.

. . . . ՊԱՐՈՆ ՍԱՆԱՍԱՐԱ ԵՒ ԽԱԹՈՒԹԵ ԼԵՐ ԲԱՐԵԽԱՒՍ ԱՌ ՔՍ:

*1125.* Խաչի տակին.

ԵՍ ՍԱՐԳԻՍ ԿԱՆԳՆԵ-
ՑԻ ՁԽԱՉՍ Ի ՅԱՆԳԸՍՏԱ-
ՐԱՆԻ . . . ԽԱԹՈՒԹԻ

*Հրատ.* Բարխուդարյանց, 385, Բարխուդարյան, ՄՆՔԿ, 190 (քաղել է նախորդից), Ավագյան, ՎՊ, 155, 183 (նմանակի), Շահինյան, ՅՄԿՅ, 43:

*Ծանոթ.* Բարխուդարյանցը ՈԴԴ (1245) թվականը կարդացել է ՈԴԳ (1244), Շահինյանը 3-րդ տողի ՈՐԴՈՑ ԻՄՈՑ կարդացել է ՈՐԴՈՅ ԻՄ, Բարխուդարյանցը 4-րդ տողի ԵՂԲԱՐՑ ՆՈՑՈՒՆՑ՝ ԵՂԲԱՐՑ ՈՒՆՑ, 6-րդի ՅՈՅԱՆԱ՝ ՈՅԱՆԻՆ, Շահինյանը նույն հատվածի ՅՈՅԱՆԱ ԱՐԴ, ՈՐՔ կապակցությունը՝ ՅՈՅԱՆՈՒ ԱՐԴ ՈՐ, քիվի և խորանի տակի ԽԱԹՈՒԹԵ անձնանունը՝ ԹՈՒԹԵ: Բարխուդարյանցը խաչքարը կազմող ՁՍԱՄԵԼ ընթերցել է Ձաբել, Ս. Բարխուդարյանը՝ զԱբել: Խաչքարի քիվի հիշատակագիրը Ավագյանի մոտ ունի «պարոն Սանասար որդի Խաթութ, լեր բաեխաւս առ Ք-ս» շարակցությունը:

*1126. ԽԱՉՔԱՐ.* Նախորդին կից, հյուսիսից, նրա ոճով. քիվին եղծված 1, խորանի տակ՝ 3 տող.

. . . ԱՎԱԳԻՆ . . .
ԵՍ՝ ՍԱՐԳԻՍ, ԿԱՆԳՆԵ-
ՑԻ ՁԽԱՉՍ Ի [ՅԱՆ]ԳԸՍՏԱՐԱՆԻ
. . . ՅԻՇԵՑԵՔ ՅԱՂԱՒԹՍ:

*Ծանոթ.* Այս «վատ պահպանված» արձանագրությունների մասին ակնարկում է Շահինյանը (Շահինյան,ՅՄԿՅ, էջ 43 ):

*1127. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ.* կիսավեր մատուռի հյուսիսային պատի արևելյան մասում ագուցված քառակող կոթողի պատվանդանի երևացող երեսին արմավի ծառ, որից կախված են 4 ողկույզներ. սպիտակավուն քար, շրջանակի վրա, եղծված.

ՅՈՀԱՆԷՍ· · · ·ՊԵՇԳԵՆ· · ԵՍՌՅՄ· ՅՈՅԱՆԷ[Ս] . . . ՊԵՇԳԵՆ . . . ԵՍ . . .

*1128. ԽԱՉՔԱՐ.* Վանքից հարավ, պատմական մեծ գերեզմանոցում, որն այժմ անտառածածկ է, սակայն մի շարք խաչքարեր ու տապանաքարեր մնում են, անվարժ ձեռքով.

ԵՍ ՅՈՎԱԴԵՂՍ . . .

*Ծանոթ.* Խաչքարը հմտամշակ է, վերնամասը՝ կլոր, նախապես եղել է որմի մեջ (որմնախաչ): Այժմ ընկած է տեղից, բայց մնում է գերեզմանի մոտ: Բնորոշ է XIII դ. կամ XIV դ. առաջին կեսին: Խաչքարի կողին 1940 թ. փորագրվել է.

ՄԱԼԽԱ
ՍՅԱՆ
ԼԵՎՈՆ: